600.0257.10.07.19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

10 հուլիսի 2019 թվականի №257Ա
ք. Երևան

«ԼԵՌ ԵՎ ՋՈՒՐ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՏԱՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ №0140 ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2004 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 30-Ի №92Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 30-րդ հոդվածը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշումը և հաշվի առնելով «ԼԵՌ ԵՎ ՋՈՒՐ» սահմանափակ պատասխատավությամբ ընկերության 2019 թվականի հունիսի 10-ի №32 գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2004 թվականի հուլիսի 30-ի «ԼԵՌ ԵՎ ՋՈՒՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №92Ա որոշմամբ (այուհետ՝ Որոշում) «ԼԵՌ ԵՎ ՋՈՒՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված «Արջուտ-2» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0140 լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգել 15 տարով:
2. Որոշման՝
   1) 1-ին կետում «15 տարի» բառերը փոխարինել մինչև «2034 թվականի հուլիսի 30-ը» բառերով, իսկ «Շիրակամուտ գյուղի մոտակայքում» բառերը՝ «Շիրակամուտ համայնքի վարչական տարածքում (գյուղ Շիրակամուտ)՝ Փամբակ գետի վրա (բնական ջրահոսք)» բառերով.

2) 2-րդ կետով հաստատված հավելվածի 3-րդ կետում «մինչև 2019 թվականի հուլիսի 30-ը» բառերը փոխարինել «մինչև 2034 թվականի հուլիսի 30-ը» բառերով, իսկ 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Լիցենզավորված գործունեության իրականացման աշխարհագրական տարածքը (գործունեության վայրը) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շիրակամուտ համայնքի վարչական տարածքն է (գյուղ Շիրակամուտ)՝ Փամբակ գետի վրա (բնական ջրահոսք):»:

3. «ԼԵՌ ԵՎ ՋՈՒՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝

1) հաշվի առնելով, որ «Արջուտ-2» փոքր հիդրոէլեկտրակայանի 2019 թվականի հունվարի 11-ի №000003 ջրօգտագործման թույլտվության համաձայն փոխվել են կայանի հաշվարկային ելքի մեծությունը, կայանի ջրառի և ջրահեռացման նիշերը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից վեցամսյա ժամկետում ներկայացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած նախագիծ (նախագծի փոփոխություններ)՝ դրական փորձագիտական եզրակացություններով՝ ընկերության «Արջուտ-2» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0140 լիցենզիայի պայմաններում ամրագրված 800 կՎտ հաշվարկային հզորության փոփոխության հարցի քննարկման նպատակով.

2) ընդունել ի գիտություն, որ.

ա. «Արջուտ-2» փոքր հիդրոէլեկտրակայանում արտադրվող ամբողջ էլեկտրաէներգիայի գնման երաշխիքի «Էներգետիկայի մասին» օրենքի 59-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետով սահմանված տասնհինգ տարվա ժամկետը ընկերության համար ավարտվում է 2019 թվականի հուլիսի 30-ին.

բ. որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ այն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հուլիսի 30-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՆԱԽԱԳԱՀ՝

Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
10 հուլիսի 2019թ.